ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 06.07.2021թ. գրության՝ տեղեկացվում է.

Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրա հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունված հ.48-Ն որոշման համաձայն: Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կարգը սահմանվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի հ.36-Ն որոշման համաձայն: Տնտեսվարող սուբյեկտներին Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից համապատասխան նախազգուշացման թերթիկներ են ուղարկվում պարտադիր բարեկարգման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ՝ տրամադրելով նաև տարածքների չափագրման սխեմաներ և ֆիտո նախագծեր:

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56-րդ հոդվածի (այսուհետ՝ Հոդված) 2-րդ կետի՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սահմանված պարտադիր բարեկարգումը չիրականացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից Հոդվածով վարչարարության իրականացումը հնարավոր է միայն համապատասխան ընթացակարգով նախազգուշացման թերթիկների, չափագրման սխեմաների և ֆիտո նախագծերի տրամադրման դեպքում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ծառայության կողմից Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Օհանովի փողոցի հ.3 շենքի հարակից տարածքում առևտրային գործունեություն իրականացնող ֆիզիկական և պաշտոնական անձանց նախազգուշացվել է գործունեության իրականացման ընթացքում պահպանել հաստատված նորմերը:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Օհանովի փողոցի հ.3/3 հասցեին կից տարածքը մաքրվել է շինարարական և այլ թափոններից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ